ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ

Արմենպրեսի թղթակիցը Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, հանրապետության պետշինի նախագահ Գ. Հովհաննիսյանին խնդրեց պատմել Հայաստանի շինարարական կազմակերպությունների կողմից ԼՂԻՄ-ի շինարարական բազայի զարգացման, բնակարանային, սոցկուլտկենցաղային և կոմունալ տնտեսության օբյեկտների կառուցման բնագավառում մարզին օգնություն ցույց տալու միջոցառումների կատարման ընթացքի մասին։

ԼՂԻՄ-ում օբյեկտների շինարարության համար ՀԽՍՀ պետշինը 1988 թվականին «Արարատարդշին» տրեստի կազմում ստեղծեց 83-րդ շինմոնտաժային վարչությունը։ Այսօր այդ վարչության շինմոնտաժային աշխատանքների 1989 թվականի ծրագիրը կազմում է 6,5 միլիոն ռուբլի, այդ թվում բնակարանային շինարարությանը՝ 1,75 միլիոն, ժողովրդական կրթության կարիքներինը՝ 0,83 միլիոն, առողջապահությանը՝ 1,14 միլիոն, արդյունաբերական և կոմունալ շինարարությանը՝ 3,15 միլիոն ռուբլի։

Ստեփանակերտ քաղաքում ԿՊ-1Պ տիպի ինը հարկանի երկու բնակելի տների շինարարությունն սկսվեց 1988 թվականին։ Ներկայումս դրանցից մեկի մոնտաժումն ավարտված է և կատարվում են հարդարման աշխատանքները։ 2320 քառակուսի մետր մակերեսով այդ տան շահագործումը նախատեսված է այս ամսվա վերջերին։ Երկրորդ տունը մոնտաժման փուլում է (մոնտաժվում է 8-րդ հարկը)։ Նախատեսված է 2320 քառակուսի մետր մակերեսով օբյեկտը շահագործման հանձնել ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակում (հոկտեմբերին)։ Քսան անհատական բնակելի տների շինարարություն է կատարվում Արմենավան ավանում։ Բոլոր տներում կատարվում են հարդարման աշխատանքներ և դրանք շահագործման կհանձնվեն այս տարվա երկրորդ (400 քառ. մետր) և երրորդ (1200 քառ. մետր) եռամսյակներում։ Ըսկըսված է Ստեփանակերտ քաղաքում 129-րդ շարքի երկու ինը հարկանի բնակելի տների շինարարությունը, որոնք պետք է շահագործման հանձնվեն 1990 թվականի առաջին կիսամյակում։ Այս տարվա երկրորդ կիսամյակում ենթադրվում է սկսել նս երկու նման տների շինարարությունը։

Սկսվել է Ստեփանակերտ քաղաքում ֆիզկուլտուրային-առողջարարական համալիրի և երաժշտական դպրոցի կըցակառույցի շինարարությունը։ Կատարվում են մոնտաժման և սկսվել են հարդարման աշխատանքները, օբյեկտները շահագործման կհանձնվեն 1989 թվականի չորրորդ եռամսյակում։ Հաթերքում և Լենինավանում սկսվել է կոնդենսատորների գործարանի մասնաճյուղերի շինարարությունը։ Ավարտվում է Ստեփանակերտ քաղաքում 83-րդ շինմոնտաժային վարչության սեփական բազայի շինարարությունը։

«Երևաննախագիծ» ինստիտուտը նախագծում է Ստեփանակերտում մշակույթի տուն, պիոներների պալատ և քաղաքային գրադարան։ «Հայպետնախագիծ» ինստիտուտը նախագծում է Ստեփանակերտի օդանավակայանը, Ասկերանի շրջանի մշակույթի տունը, դպրոցներ, մանկապարտեզներ, բնակելի տներ ԼՂԻՄ-ի բոլոր շրջաններում, «Հայարդնախագիծ» ինստիտուտը նախագծում է արդյունաբերական և կոմունալ օբյեկտներ և այլն։

«Արարատարդշին» տրեստի և 83-րդ շինմոնտաժային վարչության ղեկավարությանը ցուցումներ են տրված ըստ ուղղակի պայմանագրերի նման օբյեկտների շինարարություն սկսել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ստացման և շինհրապարակների ու ֆինանսավորման առկայության համեմատ։

Նախատեսված ծրագրի կատարման ապահովման նպատակով Հայկական ԽՍՀ պետշինը լուծում է ԼՂԻՄ-ում շինարարության նյութատեխնիկական մատակարարման հարցերը։ Շինարարության սկզբից ի վեր 83-րդ շինմոնտաժային վարչության տրամադրության տակ է ուղարկվել և ԼՂԻՄ-ում աշխատել է 16 միավոր շինարարական մեխանիզմ (ավտոկռունկներ, բուլդոզերներ, էքսկավատորներ և այլն) և 18 միավոր ավտոտրանսպորտային միջոցներ։ Նախատեսվում է այդ թվերը հասցնել համապատասխանաբար 56-ի և 45-ի։ Վարչության կազմում արդեն գործում է միջնորմասալերի և պեմզաբլոկների արտադրամաս, ամսական համապատասխանաբար 2,5 հազար քառակուսի մետր և 6000 հատ կարողությամբ։

Սեփական կարիքների, մարզի շինարարական կազմակերպություններին օգնություն ցույց տալու և բնակչությանն իրացնելու համար մինչև տարեվերջ նախատեսված է արտադրությունը կրկնապատիկ ավելացնել։

(Արմենպրես)